ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«17» հուլիսի 2017 թվականի № 89-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ, 54-րդ հոդվածներով, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի հունիսի 08-ի թիվ ԲՓ-55 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» պետական փորձաքննական եզրակացությունը, «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲ ընկերության 2017 թվականի փետրվարի 14-ի թիվ 21 դիմումը, Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը.

Հրամայում եմ

1. «Իջևանի գինու, կոնյակի գործարան» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/561 թույլտվությունը՝ (այսուհետ՝ թույլտվություն) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Աղդանի (Ակնաղբյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1PC հորատանցքից արդյունաբերական (շշալցում) նպատակով 1,0լ/վրկ ածխաթթվային հանքային ջրի արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:
2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 31,5 հազ.մ^3 ածխաթթվային հանքային ջուր:
3. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Աղդանի (Ակնաղբյուրի) ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 1PC հորատանցքից օգտակար հանածոների արդյունահանման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ ծանուցել դիմումատուին և հրավիրել վերջինիս՝ 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու (ստորագրելու և կնքելու) համար,

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացնելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո 10-օրյա ժամկետում վերջինիս տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը (օգտակար հանածոների արդյունահանման թույլտվություն, օգտակար հանածոների արդյունահանման պայմանագիր, լիազոր մարմնի հետ համաձայնեցված արդյունահանման նախագիծ),

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած,

4)սահմանված կարգով իրականացնել հանքարդյունահանման աշխատանքների պետական հաշվառումը՝ հանքարդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4.«Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո, եռօրյա ժամկետում կատարել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումները:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ